Արթին

Մի որսորդ էր ապրում աշխարհում, անունը՝ Արթին: Էս Արթինը որբ էր մեծացել, ու ժիր լինելու համար ճանաչողները նրան ասում էին Արթին, այսինքն՝ արթուն, խելքը տեղը, հնարամիտ:

Մի օր՝ լուսաբացին, նա առնում է իր հրացանն ու գնում մոտակա սարի ետևը գայլի որսի: Ճամփան անցնում է փոքրիկ կաղնուտի միջով, ուր շատ թռչուններ են բույն դրած լինում: Որսորդի ոտնաձայնն առնելով՝ թռչուններն աղմուկով ճյուղերը շարժում են: Արթինը ուսից ցած է բերում հրացանն ու այդ է՝ ուզում է մի կաքավ խփի, երբ նկատում է մի գեղեցիկ, ոսկեփետուր թռչուն: Զարմանքից կանգ է առնում, թողնում է կաքավին ու հենց ուզում է բռնել ոսկեփետուրին, սա թըռչում-նստում է մի մեծ քարի: «Լավ է, - մտածում է Արթինը, - էսպես ինձ համար ավելի հարմար կլինի»,- ու հենց նշան է բըռնում, մեկ էլ թռչունն սկսում է խոսել:

- Ա՛յ որսկան, - ասում է, - ինձ մի սպանիր, առանց այդ էլ ես մի անգամ սպանվել եմ:

- Ո՞նց թե, - զարմանում է Արթինը, - թռչունն էլ խոսի՞: Ես շատ ու քիչ բան եմ տեսել իմ որս արած տեղերում, համա խոսող թռչնի չեմ հանդիպել: Երևի դու չարք ես, հա՞: Հիմի կտեսնես, թե ոնց եմ մեծ կտորդ ականջդ թողնում:

Եվ հրացանի փողը պահում է վրան:

- Հավատա ինձ, որսկա՛ն,- թախանձում է ոսկեփետուրը,- չարք լինեի՝ ետևիցդ կգոռայի, ու դու կվախենայիր, երգ կասեի քեզ, ու ճամփադ քեզ անդունդ կտաներ, կփռշտայի, ու քթիցս ծուխ ու կրակ դուրս կգար:

Արթինը մտածում ու սկսում է հավատալ:

- Խելքին մոտ բան ես ասում: Բայց էդ ո՞նց ես մի անգամ սպանվել ու հիմի դեմս քարին թառել, մարդու լեզվով խոսում ես ինձ հետ: Իմ խփած գազան ու թռչունից ոչ մեկն ինձ երկրորդ անգամ չի հանդիպել: Հը՞: Թե չպատասխանեցիր՝ կկրակեմ, ուրեմն՝ դու գլխակեր չարք ես...

- Ես ջահել աղջիկ էի, որ մի օր մենակ գնացի ձոր՝ գետակում լվացք անելու: Մի քանի կտոր շոր էր մնացել, որ պրծնեի, մի ձիավոր կանգնեց կողքիս: Որ չնայեցի՝ տեսնեմ՝ ով է, սարսափն ինձ պատեց: Մարդ էր՝ մարդ չէր, կապիկ էր՝ կապիկ չէր. կյանքումս էդ տեսակ կենդանի չէի տեսած: Սա ինձ բռնեց, դրեց թամբին ու ձին քշեց: Ես ճչացի, ու վախից սիրտս տրաքեց: Մեկ էլ էն եմ հիշում, որ թռչնի պես թռչում եմ ձիավորի վերևով, իսկ սա շվարել է, թե ո՞ւր է գետափից իր փախցրած աղջիկը: Ինքը գնաց-կորավ մշուշ ու մեգի մեջ, ես էլ իմ հոր տուն վախեցա դառնամ: Ասի՝ կբռնեն կմորթեն ու ճաշ կեփեն:

Արթինն ապշած լսում էր թռչնին ու ցած էր դրել հրացանը: Երբ պատմությունն ավարտվեց, տեսավ՝ քարի վրա մի կարմիր կակաչ է օրորվում, բայց թռչունը չկա...

«Խաբեց ինձ չարքը: Աղջկա անունից պատմություն արավ ու անհետացավ: Էդպես շատ է պատահում»: Հրացանը պինդ պահած՝ նա քայլեց առաջ ու մտքում դրեց՝ թե մեկ էլ հանդիպի, առանց ուշ դնելու կձգի ձգանը: Նա կարծես մոռացել էր, որ գայլի որսի է դուրս եկել՝ այնքան գեղեցիկ էր ոսկեփետուրը, և այնքան անուշ էր հնչում նրա ձայնը:

Շատ էր գնացել թե քիչ, Արթինն ինքը գիտեր, սովածացավ: Ուզեց նստի մատուռից քիչ հեռու՝ աղբյուրի մոտ, ու մի բրդուճ հացուպանիր ուտի:

Թաշկինակը բացեց, հացուպանիրը բրդուճ արեց, ուզում էր ախորժակով կծի՝ աղբյուրի ջրի մեջ տեսավ ոսկեփետուրի արտացոլանքը: «Էս է,- մտածեց,- չարք է, հետևիցս ընկել, գալիս է»... Ու ձեռքը տարավ հրացանին:

- Ինչո՞ւ հացդ կիսատ թողիր,- ջրի միջից լսվեց թռչնի ձայնը;- Կեր ու էս աղբյուրից էլ ջուր խմի: Առավոտվա ջուրն ուժ է տալիս մարդուն: Էդ մասին չգիտեք ո՛չ դու, ո՛չ քո իմացած մարդիկ:

- Հա՞: Լավ ես համոզում: Չլինի՞ իմաստուն ես,- արձագանքեց Արթինը, բայց մտածում էր՝ ինչպես կրակի թռչնի վրա արտացոլանքի օգնությամբ:

- Ինձ վրա էդպես մի բարկանա,- ասաց ջուրը:

- Բա որ չարք չես, ո՞ւր կորար կաղնուտից:

- Կորա, որ ինձ փնտրես:

- Հետո էլ կրակե՞մ,- ծաղրեց Արթինը, իբր էդ հրաշքից իսկի էլ ահ չուներ:

- Չէ, սպասի,- խռովեց թռչունը,- խոստացար, որ իմ ասածը կանես: Ուր էլ ման գաս, ինձ չես գտնի իմ արտացոլանքով:

Արթինը տեսավ՝ ճար չկա, չի գտնում իրական թռչնին, ասաց.

- Որսորդի ազնիվ խոսք:

- Չէ, որսորդի չէ, էդ տեսակ ազնիվ խոսք կլինի՞...

- Տղամարդու,- համաձայնեց Արթինը,- տղամարդու ազնիվ խոսք:

- Լավ, հավատում եմ, ուրեմն՝ լսիր: Իմ էս պոչի կարմիր փետուրը տեսնո՞ւմ ես:

- Հա:

-Դու պիտի խփես ուղիղ էդ փետուրի ծայրին: Թե ինձ կպար, ես էլ երրորդ կյանքումս չգիտեմ՝ ինչ կդառնամ: Աղջիկ լինելս էնքան լավ էր:

- է կխփեմ, ինձ ի՞նչ կա,- ասաց, բայց վախեցավ վրիպի: Էնքան էր հետը զարմանահրաշ բաներ խոսել, որ չարք էլ լինի, երևի ետևից գնար ու նրա խոսքին ականջ դներ:

- Բայց դու էլ ինձ պիտի լսես,- ասաց Արթինը:- Մտնեմ էս մատուռն ու դառնամ: Չփախչես: Կաղնուտից քո կորչելուց հետո գիտեմ, թե մի տարի է անցել:

- Չեմ կորչի: Կերևամ քեզ: Գնա մատուռ, արի:

Արթինը վեր առավ հրացանը, ելավ տեղից ու, առանց ոսկեփետուրին փնտրելու, գնաց դեպի մատուռը: Հրացանը հենեց սուրբ պատին, ինքն էլ ներս մտավ ու աղոթեց: «Տեր Աստ-

ված,- ասաց,- ամուր պահիր իմ բազուկը, որ չդողդողա, գուցե գտնեմ էն աղջկան, ում ողջ կյանքումս փնտրում եմ ու չեմ կարենում գտնել, կնացու եմ ուզում, որը եմ»,- ասաց...

Արթինի միտքը մաքուր էր: Աստված սրտապնդեց նրան: Մի շող թրթռաց մատուռի երդիկից Արթինի երեսին:

Արթինը ելավ մատուռից, ամուր բռնեց հրացանն ու եկավ աղբյուրի կողմը և տեսավ՝ մի բարձր, սուր որձաքարի կանգնած է ոսկեփետուրն ու շողշողում է արևի ճառագայթների մեջ:

- Բա էն կակաչն ի՞նչ էր կաղնուտում:
- է՞ն... իմ գաղտնիքն է, հետո կիմանաս:
- Դե լավ: Հիմի կրակե՞մ:
- Հա,— ասաց թռչունը,- պատրա՞ստ ես:
- Մի մազաչափ էլ չեմ վրիպի: Աստված ինձ օգնական է:

-Դե կրակիր: Քո բախտն իմ բախտն է,- ասաց թռչունն ու կտուցը պարզեց վեր՝ հպարտ, գեղեցիկ, վախվորած կանգնեց՝ սպասելով Արթինին:

Արթինը խաչ հանեց երեսին, ծնկեց, խզակոթը հենեց ուսին, աչքը փակեց ու զգույշ ձգեց ձգանը՝ ասես դիպչում էր իր կյանքի թելին, աշխարհն անդրաշխարհից բաժանող-կապող թելին: Հրացանի որոտալն ու աչքերի դեմ փետուրների կապած ծիածանը մեկ եղան: Ինքը կարծես դարձավ մանուկ, էն առաջվա որբ մանուկը և շատ ուզեց վազել-անցնել ծիածանի տակով, շոշափել յոթնագույնի կամարը: Բայց փետուրները թափվեցին քարին ու քարի կողքերը՝ նախշելով շուրջբոլորը, ու էդ գեղեցկության մեջ՝ մի աննման աղջիկ, որպիսին նա ո՛չ իրենց գյուղում էր տեսել, ո՛չ երազում: Արթինն էդ աննմանի առջև պապանձվել էր ու չէր համարձակվում մոտ գալ՝ մինչև աղջիկը չխոսեց:

- Ես գետակում լվացք էի անում, բա ո՞ւր է գետակը:
- Դու թռչում էիր երկնքում, ի՞նչ գետ ու գետակ:
- Ես ծիտ հո չե՞մ, որ թռչեմ,- շվարեց աղջիկը:
- Մոռացար: Քեզ հասկացա: Ես էլ որ երազ եմ տեսնում, արթնանալիս չեմ իմանում, թե որտեղ եմ՝ էստե՞ղ, թե՞ էնտեղ:
- Ճիշտ ես ասում, ա՛յ որսորդ տղա: Բայց երազումս ոնց որ ձեռքիցս կակաչ վայր ընկավ: Ո՞ւր մնաց տեսնես:

- էդ էն կաղնուտում էր: Սրանից առաջ:- Ու ձեռքը պարզեց քարին:

Աղջիկը նայեց շուրջբոլորն ու նախշուն փետուրներից արմանք -զարմանք կտրեց, հետո շուրթը կծեց, հիշեց իր գլխին եկած պատմությունն ու Արթինին երախտագետ, սիրալիր ասաց.

- Դու իմ կյանքը փրկեցիր, քա՛ջ տղա: Ես աղջիկ էի ու թռչուն դարձա, ես թռչուն էի ու աղջիկ դարձա:

- Ո՞րն էր լավ,- հարցրեց Արթինը՝ չգիտես ինչու իր որբությունից, անտերությունից տրտմած: Թե՞ աղջկա գեղեցկությունն էր տրտմեցրել նրան:

- Էնքա՜ն էի կարոտել, էնքա՜ն էի կարոտել, չես պատկերացնում:

- Մեզպեսների՞ն,- հուշեց՝ կարծես ինքն էլ գլխի ընկնելով:

- Հա:

- Բա էն ի՞նչ կակաչ էր, որ թողեցիր կաղնուտում,- անհամբեր հարցրեց Արթինը:

- Կարոտել էի: Հետո էլ դու ինձ շատ դուր եկար: Իսկի էն ձիավորին նման չես:

- Սատանի՞:

- Հա,- ասաց:

- Տղամարդը սատանից որ մի քիչ էլ սիրուն լինի, հաջողակ է,- ծիծաղեց:

- էդ կակաչը քեզ էի գցել,- ժպտաց:

Արթինը ափսոսաց, որ չէր վերցրել կակաչը; Բայց դե աղջիկն արդեն համարյա խոսք էր տալիս, որ կդառնա իր կինը:

- Աստված որբիս ձենը լսեց:

Ու հրացանը նետեց մի կողմ, մոտ եկավ աղջկան, գրկեց ու համբուրեց:

- Չէ, շատ չէ,- ասաց,- երբ քո կինը դառնամ՝ նոր:

- Էսօրվանից դու իմ կինն ես, ու ես էլ՝ քո ամուսինը: Ու մինչև մահ ու գերեզման մենք իրարից անբաժան ենք:

- Բա իմ հորանք չիմանա՞ն...

-Չէ,- ասաց Արթինը,- չեն հավատա: Ես աչքովս տեսա, ու թվում է՝ երազի մեջ եմ: Մի օր լուր կուղարկենք ու կպատմենք եղած-չեղածը: Հիմի քեզ իմ տուն կտանեմ: Դու ինձ յոթ զա-

վակ պիտի պարգևես: Ես մենակ եմ մեծացել աշխարհում:

Աղջիկը սիրեց քաջ տղային, ճարպիկ որսորդին, մենակ ու տխուր մարդուն: Ու բախտը կապեց նրա հետ Աստծո կամոք:

Եվ քանի որ մաքուր էր Արթինի միտքը, կատարվեց այն, ինչը Արթինն էր ուզում:

Յոթ զավակ ունեցավ լվացք անող աղջկանից՝ ոսկեփետուր հավքից՝ իր երազներում պահ մտած գեղեցկուհուց:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԿԱՏԱԿԸ.....3
ՍՈՈՒՄ.....7
ԿՈՐՈՒՍՏԸ.....11
ՇԵՂՈՒՄ.....19
ԵՐԵՔՆՈՒԿ.....33
ՀՈԳԵԿԻՑԸ.....37
ԱՆՏԵՐՆԵՐԸ.....41
ՈՎ ՋԱՐՄԱՆԱԼԻ.....45
ԵՎ ԹԱԽԻՇԸ ԱՉՔԵՐԻ.....50
ԽՂՃԻ ԽԱՅԹԸ.....60
ԱԿՈՐԴԵՈՆԸ.....69
ԾՆՆԴՅԱՆ ՕՐ.....76
ՋՐԻ ԲԵՐԱԾ, ՋՐԻ ՏԱՐԱԾ.....82
ՈՐՍՈՐԴՆ ՈՒ ԱՂՋԻԿԸ (հեքիաթ).....86